ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«__10__» ____հոկտեմբերի____ 2019 թ. № _____670-____ Լ

ԻՆԿՈՐՊՈՐԱՑԻԱ
ՀՀ ՊԵԿ նախագահի 16.07.2021թ.
N705-Լ հրամանի խմբագրությամբ

Հ Ր Ա Մ Ա Ն

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇՎԻՆ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԸ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 348-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 14-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրության և (կամ) պարզեցված ընթացակարգ կիրառելու դիմումի ձևը և լրացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Մինչև հարկային մարմնի էլեկտրոնային եղանակով փաստաթղթերի ընդունման համակարգում միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների

հիմնավորվածության ուսումնասիրության և (կամ) պարզեցված ընթացակարգ կիրառելու դիմումի էլեկտրոնային եղանակով ներկայացման հնարավորության ստեղծումը նշված դիմումը ներկայացվում է թղթային եղանակով:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրվանից:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԿՈՂՄԻՑ

Հավելված
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2019թ. __հոկտեմբերի_10_ -ի N_670_-Լ հրամանի

Դ Ի Մ Ո Ւ Մ **ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇՎԻՆ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ԿԻՐԱՌԵԼՈՒ**	Փաստաթղթի հերթական համարը _____ (լրացվում է հարկային մարմնի կողմից)							
1. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)								
2. Հարկ վճարողի անվանումը								
3. Հարկ վճարողի գտնվելու վայրը								
4. Հարկ վճարողի հեռախոսահամարը								
5. Հարկային մարմնի անվանումը								
5.1. Օրինապահ հարկ վճարողի գործող հավաստագրի	համարը	գործողության ժամկետը						
		_____ (ամսաթիվ, ամիս, տարեթիվ)			_____ (ամսաթիվ, ամիս, տարեթիվ)			

6. Խնդրում եմ ստորև նշված հաշվետու ժամանակաշրջանների համար իրականացնել միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրություն.

1) ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներից ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի գծով.

ՏԱՐԻ	ԱՄԻՍ/ ԵՌԱՄՍՅԱԿ	ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ	ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ
ԸՆԴԱՄԵՆԸ			

2) հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի գծով.

ՏԱՐԻ	ԵՌԱՄՍՅԱԿ	ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ	ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ
ԸՆԴԱՄԵՆԸ			

3) հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի գծով.

ՏԱՐԻ	ԿԻՍԱՄՅԱԿ	ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ	ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ
ԸՆԴԱՄԵՆԸ			

4) ՀՀ հարկային օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված գործարքներից ակցիզային հարկի փոխհատուցվող գումարի գծով.

ՏԱՐԻ	ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ	ԳՈՒՄԱՐ
ԸՆԴԱՄԵՆԸ		

6.1. 2021 թվականի հուլիսի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների մասով՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման օրվան հաջորդող օրվա դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի գծով.

ՏԱՐԻ	ԱՄԻՍ	ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ	ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ
ԸՆԴԱՄԵՆԸ			

7. Խնդրում եմ իրականացնել ՀՀ հարկային օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առկա գերավճարներից միասնական հաշվին մուտքագրման ենթակա _____ դրամ գումարի հիմնավորվածության ուսումնասիրություն:

Կից ներկայացնում եմ մինչև 2017 թվականի հունվարի 1-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար ստացված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների՝ մինչև 2017 թվականի հունվարի 1-ը գործող կարգով բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին կատարված վճարումը հիմնավորող փաստաթղթերը _____ էջ:

Պատասխանատու անձի _____
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇՎԻՆ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԻ

Միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրության և (կամ) պարզեցված ընթացակարգ կիրառելու դիմումի ձևի՝

1) 1-ին կետում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ),

2) 2-րդ կետում լրացվում է իրավաբանական անձի անվանումը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ «ԱՁ» նշումը և անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի դեպքում՝ ֆիզիկական անձի անունը, ազգանունը,

3) 3-րդ կետում լրացվում է հարկ վճարողի գտնվելու վայրը (իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի գտնվելու վայրը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի դեպքում՝ բնակության վայրը),

4) 4-րդ կետում լրացվում է հարկ վճարողի հեռախոսահամարը,

5) 5-րդ կետում լրացվում է հարկ վճարողի հաշվառման վայրի հարկային մարմնի անվանումը,

5.1) 5.1-ին կետում լրացվում է օրինապահ հարկ վճարողի գործող հավաստագրի համարը, գործողության ժամկետը: Ընդ որում, օրինապահ հարկ վճարողի հավաստագրի գործողության ժամկետի սկիզբ է համարվում հավաստագրի տրման օրը, իսկ ավարտը՝ հավաստագրի տրման օրը ներառող ամսվան հաջորդող 12-րդ ամսվա վերջին օրացուցային օրվա ավարտը,

6) 6-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետը լրացվում է (ըստ ամիսների կամ եռամսյակների), եթե հարկ վճարողը ցանկանում է դիմել միասնական հաշվին մուտքագրման ենթակա՝ ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի հիմնավորվածության ուսումնասիրություն իրականացնելու և (կամ) պարզեցված ընթացակարգ կիրառելու համար: Դիմումի ձևի 6-րդ կետի 1-ին ենթակետը լրացվում է ըստ ամիսների՝ ամսական կտրվածքով (օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվետու ժամանակաշրջան է համարվել ամիսը) ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ (ավելացված արժեքի հարկի հաշվարկ) ներկայացված լինելու

դեպքում, ըստ եռամսյակների՝ եռամսյակային կտրվածքով (օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվետու ժամանակաշրջան է համարվել եռամսյակը) ավելացված հարկի արժեքի հաշվարկ ներկայացված լինելու դեպքում:

բ. եթե միասնական հաշվին մուտքագրման ենթակա ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարների մինչև 40 միլիոն դրամի, իսկ օրինապահ հարկ վճարողի գործող հավաստագիր ունեցող հարկ վճարողների դեպքում մինչև 60 միլիոն դրամի հայտերի հիման վրա կիրառվելու է պարզեցված ընթացակարգ, ապա 1-ին ենթակետի «ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ» սյունակի համապատասխան վանդակում լրացվում է համապատասխան գումարի չափը,

գ. եթե միասնական հաշվին մուտքագրման ենթակա ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարների մուտքագրումը միասնական հաշվին կատարվելու է ուսումնասիրության հիման վրա, ապա 1-ին ենթակետի «ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ» սյունակի համապատասխան վանդակում լրացվում է համապատասխան գումարի չափը,

դ. 2-րդ ենթակետը լրացվում է (ըստ եռամսյակների), եթե հարկ վճարողը ցանկանում է դիմել միասնական հաշվին մուտքագրման ենթակա՝ յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի հիմնավորվածության ուսումնասիրություն իրականացնելու և (կամ) պարզեցված ընթացակարգ կիրառելու համար:

Ընդ որում, յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարն այդ եռամսյակի հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում արտացոլված դեբետային գումարների հանրագումարն է,

ե. եթե միասնական հաշվին մուտքագրման ենթակա՝ յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի մինչև 40 միլիոն դրամի, իսկ օրինապահ հարկ վճարողի գործող հավաստագիր ունեցող հարկ վճարողների դեպքում մինչև 60 միլիոն դրամի հայտերի հիման վրա ԱԱՀ-ի գումարների մուտքագրումը միասնական հաշվին կատարվելու է պարզեցված ընթացակարգով, ապա

2-րդ ենթակետի «ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ» սյունակի համապատասխան վանդակում լրացվում է համապատասխան գումարի չափը,

զ. եթե միասնական հաշվին մուտքագրման ենթակա՝ յուրաքանչյուր հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի մուտքագրումը միասնական հաշվին կատարվելու է ուսումնասիրության հիման վրա, ապա 2-րդ ենթակետի «ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ» սյունակի համապատասխան վանդակում լրացվում է համապատասխան գումարի չափը,

է. 3-րդ ենթակետը լրացվում է (ըստ հաշվետու ժամանակաշրջանների), եթե հարկ վճարողը ցանկանում է դիմել միասնական հաշվին մուտքագրման ենթակա՝ մինչև 2019 թվականի հուլիսի 1-ը յուրաքանչյուր հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի հիմնավորվածության ուսումնասիրություն իրականացնելու համար:

2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի հուլիսի 1-ը յուրաքանչյուր հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարն այդ կիսամյակի հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում արտացոլված դեբետային գումարների, իսկ մինչև ՀՀ հարկային օրենսգիրքն ուժի մեջ մտնելն (մինչև 01.01.2018թ.) ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների՝ հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարները գերազանցող գումարների (բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների) հանրագումարն է,

ը. եթե միասնական հաշվին մուտքագրման ենթակա՝ յուրաքանչյուր հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի կամ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի մինչև 40 միլիոն դրամի, իսկ օրինապահ հարկ վճարողի գործող հավաստագիր ունեցող հարկ վճարողների դեպքում մինչև 60 միլիոն դրամի հայտերի հիման վրա ԱԱՀ-ի գումարների մուտքագրումը միասնական հաշվին կատարվելու է պարզեցված ընթացակարգով, ապա 3-րդ ենթակետի «ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ» սյունակի համապատասխան վանդակում լրացվում է համապատասխան գումարի չափը,

թ. եթե միասնական հաշվին մուտքագրման ենթակա՝ յուրաքանչյուր հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի կամ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարի մուտքագրումը միասնական հաշվին կատարվելու է ուսումնասիրության հիման վրա, ապա 3-րդ ենթակետի «ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ» սյունակի համապատասխան վանդակում լրացվում է համապատասխան գումարի չափը,

ժ. եթե հարկ վճարողը ցանկանում է դիմել միասնական հաշվին մուտքագրման ենթակա՝ ՀՀ հարկային օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված գործարքներից ակցիզային հարկի փոխհատուցվող գումարի հիմնավորվածության նպատակով ուսումնասիրություն իրականացնելու համար, լրացվում է միայն 6-րդ կետի 4-րդ ենթակետը,

ժա. 6-րդ կետի 2-3-րդ ենթակետերը լրացվում են մինչև 2021 թվականի հուլիսի 1-ն ընկած հաշվետու ժամանակաշրջանների արդյունքներով՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարների գծով,

6.1) 6.1-ին կետը լրացվում է 2021 թվականի հուլիսի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանն՝ ըստ ամիսների, եթե հարկ վճարողը ցանկանում է դիմել միասնական հաշվին մուտքագրման ենթակա՝ հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման օրվան հաջորդող օրվա դրությամբ օրենսգրքի 74-րդ հոդվածով սահմանված ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարի հիմնավորվածության ուսումնասիրություն իրականացնելու և (կամ) պարզեցված ընթացակարգ կիրառելու համար: Եթե միասնական հաշվին մուտքագրման ենթակա ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարների մինչև 40 միլիոն դրամի, իսկ օրինապահ հարկ վճարողի գործող հավաստագիր ունեցող հարկ վճարողների դեպքում մինչև 60 միլիոն դրամի հայտի հիման վրա ԱԱՀ-ի գումարների մուտքագրումը միասնական հաշվին կատարվելու է պարզեցված ընթացակարգով, ապա ԱԱՀ փոխհատուցվող գումարի համապատասխան չափը լրացվում է «ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ» սյունակի համապատասխան վանդակում: Եթե միասնական հաշվին մուտքագրման ենթակա ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարների մուտքագրումը միասնական հաշվին կատարվելու է ուսումնասիրության հիման վրա, ապա ԱԱՀ փոխհատուցվող գումարի

համապատասխան չափը լրացվում է «ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ» սյունակի համապատասխան վանդակում,

7) 7-րդ կետում լրացվում է ՀՀ հարկային օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առկա գերավճարներից միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարի չափը,

8) Մինչև 2017 թվականի հունվարի 1-ն ընկած որևէ հաշվետու ժամանակաշրջանի համար դիմումում պարզեցված ընթացակարգ կիրառելու վերաբերյալ նշում լինելու դեպքում դիմումին կից ներկայացվում են նաև այդ հաշվետու ժամանակաշրջանի համար ստացված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների՝ մինչև 2017 թվականի հունվարի 1-ը գործող կարգով բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին կատարված վճարումը հիմնավորող փաստաթղթերը և լրացվում է դրանց էջերի քանակը:

Հարկային մարմին ներկայացվող դիմումում պարտադիր լրացվում են դիմումի ձևի 1-5-րդ կետերը, 6-րդ կետի որևէ ենթակետ և (կամ) 2021 թվականի հուլիսի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար 6.1-ին կետը կամ 7-րդ կետը: Ընդ որում, դիմումի 7-րդ կետը լրացվելու դեպքում դիմումի 6-րդ և 6.1-ին կետերը չեն լրացվում:

Դիմումում նշված հաշվետու ժամանակաշրջան(ներ)ի համար պետք է սահմանված կարգով հարկային մարմին ներկայացված լինեն տվյալ հաշվետու ժամանակաշրջան(ներ)ի համապատասխան հարկատեսակի գծով բոլոր հարկային հաշվարկները, իսկ «ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ» սյունակի համապատասխան վանդակում նշում կատարված լինելու դեպքում՝ դիմումի հարկային մարմին ներկայացման օրվա դրությամբ լրացած հաշվետու ժամանակաշրջանների համար ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկները:

Հարկային մարմին ներկայացված դիմումի 6-րդ կետի որևէ ենթակետում կամ 2021 թվականի հուլիսի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար 6.1-րդ կետում նշված հաշվետու ժամանակաշրջանի համար հարկ վճարողը պետք է ունենա ԱԱՀ-ի փոխհատուցվող գումար (բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումար):

Հարկային մարմին ներկայացված դիմումում նշված նույն հաշվետու ժամանակաշրջանների ցուցանիշները չպետք է լրացված լինեն դիմումի 6-րդ կետի տարբեր ենթակետերում:

Դիմումում բոլոր արժեքային մեծությունները լրացվում են ՀՀ դրամով: